

ՄԱՍԿ

Տարեկան դիմ 10 րուբլ, կես տարեկան 6 րուբլ:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Ծանոթացրուք ղեկավարին և ուղղակի

Тифлис. Редакция «Маск»

Խմբագրատանը քսոց է առաջ տեսն 10—2 ժամ

(հացի կիրակի և տոն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզով:

Յայտարարութիւնների համար վճարում են

խրատանիս քսոց 2 կոպեկ:

„ՄԱՍԿ“

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881

(ՏԵՄԵՐՈՐԴ ՏԵՐԻ)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոգրամայով ԱՄԵՆ ՕՐ (բացի տոն և տոներին հետևել օրերից):

ՊՐՕԳՐԱՄԱՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆիլիստին և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ:

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԵԼ, տարեկան 10 րուբլ, կես տարեկան 6 ր., հինգ ամս. 5 ր., չորս ամս. 4 ր., երեք ամս. 3 ր. երկու ամս. 2 ր. և մի ամս. 1 րուբլ:

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւալ հասցեով. Тифлис, редакция «Маск».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԺՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Մամուլի օրէնք:—Ներքին տեսութիւն: Մեր կրեդիտական հիմնարկութիւնները, Նամակ Մոսկովայից, Նամակ Բաթումից, Նամակ Գուշեթից: Նամակ Խմբագրին: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: «Голосъ» լրագրի թղթակցութիւն: Թիֆլիս: Արեւելեան գործեր: Նամակ Թիֆլիսից:—Մշակի: հեռագիրներ: Յայտարարութիւններ:

ՄԱՍԿԻԻ ՕՐԵՆՔ

Լրեկվայ հեռագիրը բերեց մեզ մի ուրախալի լուր, այն է որ տպագրական օրէնքները վերաքննող Ս. Պետերբուրգում բարձրագոյն հաստատված յանձնաժողովը վճռել է ազատել մամուլը վարչական պատիժներից և ենթարկել տպագրական խօսքի յանցանքներն ու զեղծումները ընդհանուր օրէնքներին, այսինքն դատաստանի քննութեանը:

Եւ ճշմարիտ, իւրաքանչիւր ռուս հպատակ, ռուս պետութեան իւրաքանչիւր քաղաքացի իր ամեն յանցանքի կամ զեղծման համար պատասխանատու էր միշտ դատարանի առջև, իսկ գրողը, լրագրագետը վարչութեան կամ մայականութեան էր ենթարկված: Լրագրագետը, գրողը, հեղինակը բոլոր համաքաղաքացիների մէջ պետութեան միակ խորթ որդիներ, անհարազատ զաւակներն էին, որոնք էին վայելում պետական օրէնքների նոյն բարիքները, որ վայելում էին միւս հպատակները:

Լրագրագետը, հեղինակը միշտ մնում էին անչափահաս, իրաւագուրկ համեմատելով միւս համաքաղաքացիների հետ:

Դեռ անգլիացի երեւելի բանաստեղծ և իմաստասէր Միլտոն ա-

տեղծ և իմաստասէր Միլտոն ասում էր, ինչ կարող է լինել մի չափահաս մարդու համար աւելի վերաւորիչ քան թէ միջին կեանքի վերջը միշտ համարվել աշակերտ, որ իր տեսարանները պետք է ներկայացնի վարժապետի քննութեանը: Այդ դրութեան մէջ է հեղինակը, լրագրագետը ցեղջորի առջև: Երեւակայեցէք ձեզ մի մարդ, որ ուսում է առել, աշխատել է իր ամբողջ կեանքը, հեղինակել է մի գրութիւն կամ մի յօդուած լաւ մտածելուց, աշխատելուց, իւրաքանչիւր միտք, իւրաքանչիւր բառ կշռելուց յետոյ, և յանկարծ մի պաշտօնեայ, որ նրա չափ գիտութիւն չունի, որ չէ կարող զգալ այն ինչ որ նա է գգում, ջնջում է նրա ստեղծագործութիւնը, նրա սրտից բղխած խօսքը, նրա մտքի զաւակը, նրա ուղեղի թարմ արտաթափումը: Օգալ իրան ամբողջ կեանքը տարրական դպրոցում, կախված լինել մի խիստ ուսուցչից, որ դատում է կամ ջնջում է աշակերտի տեսարանները, ահա հեղինակի դրութիւնը: Միլտոն խօսում էր միմիայն մի գէնգուրայի մասին: Բայց որքան աւելի անտանելի է գրողի դրութիւնը երբ նա ենթարկված է լինում միաժամանակ մի քանի գէնգուրաներին, երբ կայ ընդհանուր գէնգուրա, հոգեւոր գէնգուրա, վարչական գէնգուրա, փոստային գէնգուրա, օտար լրագիրների գէնգուրա, պոլեցիական գէնգուրա, և այլն:

Այժմ ռուսաց մամուլը ինքն իրան հարց է առաջարկում. մի՞թէ գրականութիւնը և լրագրու-

թիւնը, որոնք ամեն տեղ ծանաչված են ոչ թէ միայն որպէս ժողովրդի կրթիչներ, բայց և որպէս տէրութեան բարեկամներ, մի՞թէ մեզանում փաստակար են համարվում, կամ աւելի վտանգաւոր են ծանաչված քան թէ մարդկային կեանքի մնացած մտաւոր և նիւթական գործողութիւնները:

Ազատել մամուլը վարչական կամայականութեանց, ազատել նրան բացառական օրէնքներից և ենթարկել նրան ընդհանուր պետական դատարաններին, նշանակում է արդարութեամբ վարվել, նշանակում է նայել վերջապէս մամուլի և գրականութեան աշխատողների վրա, ինչպէս և բոլոր մնացած հասարակական գործիչների, բոլոր հպատակների վրա, հաւասարեցնել բոլորի իրաւունքները ընդհանուր օրէնքների առջև:

Այն օրից, երբ մամուլը և գրականութիւնը ենթարկվեն հաւասարապէս մնացած քաղաքացիների պետութեան ընդհանուր օրէնքներին, պետական ընդհանուր դատարանների իրաւասութեանը, — գրողները կը զգան որ իրանք էլ դարձան ազատ մարդիկ, իրանք այլ ևս պետութեան անհարազատ որդիներ, նրա խորթ զաւակներ չեն: Այսինքն հեղինակութեան և մամուլի համար կը սկսվի մի նոր և պայծառ դարապշտիւն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՄՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԿՐԵԴԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԳԱՌԹԻՒՆՆԵՐԸ

Թիֆլիսում հրատարակող «Тифлис. Объявления» թերթի մէջ կարդում ենք հետևեալ յօդուածը:

Վերջին ժամանակները մեր կրեդիտ աւելի և աւելի դժուարանում է: Պրիկազից և կալուածական բանկից արդէն փողեր չեն տալիս անշարժ կայքերի գրաւականով այդ պատճառով շինութիւններից շատերը դադարել են շարունակվելուց և անշարժ կայքերի գրաւականով վերցվող պրոցէսոր հասել է մինչև 15: Փոխադարձ կրեդիտի և Աւետարական բանկի մէջ վիճակներով արդի փողերի պրոցէսոր նշանաւոր կերպով բարձրացաւ, իսկ կովկասեան Պրիկազը թանգազին իրերի գրաւականով վիճակների հատմամբ վերցվող 10% պարզ ցոյց է տալիս որ մեր դրամական վաճառանքի վրա արդու է յուսահատութիւն: Մեր դրամական գրութեան այդ անաջող պայ-

մանները շատ պատճառներ ունեն: Մեր դրամական վաճառանքը, առհասարակ, աղքատ է կապիտալներով, օրովհետեւ մեր արհեստներով թեւեւ ոչ թէ Պետերագմի ժամանակ կապիտալների մեծ հոսանք կար դէպի մեր երկիրը և տեղաւորվեցան այլ և այլ հիմնարկութիւնների մէջ: Պատերազմից յետոյ, թանգութեան և սովի ժամանակ, կապիտալները կրկին յետ քաշվեցան մեր վաճառանքից, որի վրա այդ պատճառով զգալի եղաւ փողի պակասութիւնը: Բանկերը բարձրացրին գնումների վրա պրոցէստներ, որպէս զի գրաւեն կապիտալները: Պրիկազը սկսեց գնումների վրա մի պրոցէստ աւելի տալ կապիտալների պակասութեան պատճառով և ընդհանուր ազատութեան պատճառով շինութիւնները կանգ առան, առուտուրը սկսեց վատ ընթանալ, երեւցան սնանկութիւններ:

Այդ տեսակ դրութիւնը չէր կարող ներգործութիւն չունենալ ծանր կերպով կրեդիտի վրա: Այն մարդկանց, որոնց հաւատում էին հարկւոր հազարներ, այլ ևս 5000 չեն հաւատում: Շատերը ձեռնարկութիւններից, որոնք հիմնված չեն կապիտալի վրա, ոչնչացան կամ անցան ուրիշ ձեռքեր: Այդ հանգամանքները ծանր հետքեր են թողել հասարակութեան վրա: Վաճառականները հազիւ շունչ են քաշում, նրանք 20% են վճարում տարեկան միայն որ ծարեն փողեր և այն էլ դժուարութեամբ են ձեռք բերում: Գործարանատէրերը և արուեստաւորները ստիպված են իրանց գործերը նուազացնել: Պաշտօնեաները վաշխառւորների մօտ են դիմում փող ծարելու համար, կալուածատէրերը ծախում են իրանց կայքերը, գործի կամ աշխատանքի պակասութիւնը ստիպում է շատերին սոված մնալ:

Ռուս թերթը մեղադրում է այդ անմխիթար վիճակի մէջ մեր կրեդիտական հիմնարկութիւնները:

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ

Նոյեմբերի 13

Ազգութեան և կրօնի հարցը մի անազն փոթորիկ բարձրացրեց մեր հասարակութեան մէջ: Հարցի ծանրութիւնը և նրա համազգային նշանակութիւնը այն աստիճան զրգեցին հասարակութեան ուշադրութիւնը, որ շատ կարճ միջոցով վերջինի բոլոր հակադրող մասը բաժանվեց երկու հակառակ բանակների, իրանց պարագլուխ ունենալով «Մշակ» և «Մզու» լրագիրները: Այսպիսի համոզմունքների և հայացքների մի հետաքրքիր պատերազմ, որ շարունակվում է մինչև այժմ: Ով որ անմիջապէս չէ մասնակցել այդ բանաբային կուէին և մի կողմից միայն դիտողական դիրք բռնելով հետեւել է նրա ընթացքին, նա կարող է համարձակ ասել, որ յաղթութեան փառք վայելում է այն կողմը, որ հիմնում է իր գործունէութիւնը գիտութեան, մարդասիրութեան և ճշմարիտ ազգասիրութեան սկզբունքների վրա:

Շատերին զայբացնում է «Մշակի» հակառակորդի յամաւորութիւնը, նրանց ամենաբնական միջոցների դիմելը, անմտութեամբ ամբողջ կրեք գրգռելը, — բայց շատ գուր է այդ զայբացումը: Նրանց այդ պակասակալի գործունէութիւնը ոչ

Թէ քննարկուած է գործին, այլ ընդհանրապէս չէ
զեղիկ կերպով նպատակ ունի նրա գործադրմանը
Առհասարակ կրնա՞նք զայն հասարակութեան
մէջ ամեն մի լուսնոր գաղափար, ամեն մի
համարադրութիւն, որ արծարծուած է գրականու-
թեան մէջ, մինչև ընդհանուր ընդունելութիւն
գտնելը միշտ հանդիպում է անհաւատութեան ընդդի-
մադրութեանը, և որքան կատաղի լինի այս
վերջինը, որքան ցած և կոպիտ լինեն նրա ընտ-
րած հակառակելու միջոցները, այնքան յաջո-
ղութեամբ կը բազմանայ ճշմարտութեան համան-
կերպութեան թիւը հակադրող դասակարգութեան
մէջ, իսկապէս միջոցութեամբ, անհնար ընդդիմադ-
րութիւնը միշտ օգնում է ճշմարտութեան հաս-
տատուելուն և տարածելուն: Այդ մի ընդհա-
նուր օրէնք է, որ կարելի է նկատել ամեն մի
հասարակութեան մտաւոր զարգացման պատմու-
թեան մէջ: Ինչպէս մի որ և է մտքի դէմ կըն-
ուած են այնպիսի հնադարեան գուռ և ժամդո-
ւած զինքներով, ինչպէս հայտնաբեր, բաժնաւոր
և յանդուգն ստախոսութիւն, այնպէս քարոզիչ
մտքի յաջողութիւնը պայտօնված է:

Անթիւ տեղեկութիւններ բոլոր հայաբնակ
քաղաքներէն պարզ ցոյց են տալիս, որ «Մշակի»
պատկանած միտքը առաջ է դնում հակադական
քայլերով: Հասարակութեան բոլոր ճշմարիտ
հակադրող մասը, որին մատչելի է հարցի էտ-
թիւնը և որ ձգտում է հիմնել ազգային կեանքը
գիտութեան հիմունքներէ վրայ, բոլոր սրտով
համակրում է վերջինիս մտքին: Թող խաւար
տգիտութիւնը շարունակի իր յամառ ընդդիմա-
դրութիւնը, թող նա միմիայն իրան ցնդաբա-
նական յայտնով, թող նա լարի իր բոլոր ուղի-
քները, որոնք քննարկուած ճշմարտութեանը, նրա
այդ գործունէութիւնը կարող է զմայլեցնել
միայն Տէր-Ղազարեանցիներն ու Նազարեանցի-
ներին:

Հատ չի անցնի և մեր հասարակութիւնը կա-
տարեալէն կըմտնի արդիւթեան և կրօնի
սկզբունքներէ տարբերութիւնը: Կրօնով նա,
«Մշակի» շարժով, մի մեծ քայլ փոխած կը լինի
ստախոսութեան ճանապարհի վրայ:

Ա. Կաղանց

ՆԱՄԱԿ ԲԱՔԱՌԻՄՅՑ

Նոյեմբերի 10

Ներկայիս կը օտարաբ 173 ր. 25 կոպէկ,
որն որ աստ հաւաքած եմք ի նպատակ անայ
սովորեց, և կը խնդրեմք այս գումարը խրկէք
ուր որ հարկն է: Նմանապէս խոնարհաբար կը
խնդրեմք նուիրատուաց անունները հրատարա-
կէք, որն որ աստ ներկայիս ձեզ կըղարկեմք:
Պ. Փիլոսոֆ 30 ր., Ս. Հեղինակ 10 ր., Ա.
Գեղարքով 10 ր., Ս. Յովհաննէսեան 10 ր., Ա.
Մէնշինեան 10 ր., Յ. Հէքիմեան 10 ր., Յ.
Զիւլպիեան 3 ր., Ս. Կարինեան 5 ր., Յ.
Էլմաստ 5 ր., Գ. Աղլանեան 5 ր., Գ. Հէ-
տէօֆ 1 ր., Յ. Միստան 3 ր., Ս. Ալեքսա-
նեան 5 ր., Ս. Կ. Չիւլպիեան 5 ր., Ս.
Միստան 2 ր. 25 կ., Գ. Ներսէսեան 3 ր.,
Կ. Տէր-Ստեփանեան 3 ր., Ս. Մուրադեան 2 ր.,
Յ. Խանխանլեան 1 ր., Յ. Քամպեան 3 ր.,
Միկայելեան 10 ր., Յ. Թիւրքեան 5 ր., Յ. Կ.
Ն. Բարսեղեան 2 ր., Գ. Գամպեան 3 ր.,
Ս. Կ. 1 ր., Ս. Գալիլէան 3 ր., Գ. Գեղե-
քեան 50 ր., Ս. Միկայելեան 50 ր., Ս. Ա.
Լեւոնեան 3 ր., Գ. համի Գեղարքեան 3 ր., Վար-
թիկեան 1 ր., Վաստ 1 ր., Ա. Ալթունեան 2
ր., Ա. Երկանով 2 ր., Մարկոս և Միկայ 1 ր.,
Յ. Մամեկեան 1 ր., Ա. Թերաքեան 1 ր., Յ.
Սարգսեան 10 ր., Ա. Յովհաննէսեան 2 ր.,
Գումարը 178 ր. 25 կ.: Վերջինիս անձինքներէ
մէջ Սիմոն Մուրադեանը և Յարութիւն Գումար-
եանը չը վճարեցին 5 ր.: Ընդամենը գումար
173 րուր 25 կոպէկ:

Պօղոս Փիլոսոֆ, Սեդրակ Քեղեցեան

ՆԱՄԱԿ ԴԻՄԵՆԹԵՅՑ

Նոյեմբերի 10

Դուք չէիք հայոց եկեղեցի երեցիկները պա-
տուաւոր քաղաքացի պ. Միքայէլ Տէրաքեանին
է, որ 23 տարի շարունակաբար վարելով քրի-
ստոնէական խնամքներով և հասարակութեան
իր պաշտօնը, կոպէկ կոպէկ փողովելով եկեղեցու
համար մօտ 4000 րուրի է կազմել և սուսէ Պը-

րիկազը շահեցնելու: Այժմ լսում ենք, որ նա
զգլած տեղոյս գործակալ Բէգիջանեանցի և ան-
հետի, որ կոնսիստորը ուշադրութիւն չէ դարձ-
նում իրան գանգաւորներին, կամենում է հրաժար-
վել իր պաշտօնից և նրա տեղը ընտրելու է գոր-
ծակալի առաջարկութեամբ տեղոյս բնակիչ Սի-
մէօն Ալիխանեանցը: Եթէ յիշատ. Տէրաքեանցը
թողնում է իր պաշտօնը և նրա տեղ հոգեւոր իշ-
խանութիւնը ընտրում է Ալիխանեանցին, մեծ
թշուառութիւն է Կուշէթի եկեղեցու համար, ու-
րովհետեւ Ալիխանեանցը լինելով քաղաքացուիս,
անցեալ տարի արձակվեց պաշտօնից քաղաքի
1500 րուր վաճառելու համար: Նա պարտաւ մարդ
է, հէնց եկեղեցական փողերը ձանգը դրեց թէ
չէ, մնաւ բարե... Խնդրեմ հեր «Մշակ» հրա-
ւիրէք հոգեւոր իշխանութեան ուշադրութիւնը այս
բանի համար: Կուշէթեցիք առհասարակ լաւ մար-
դիկ չեն սիրում ու պատուում:

ՆԱՄԱԿ ԽՍԻՍԻՍԻՆ

Ուրիշիս, 17 նոյեմբերի

Յայտնի է, որ «Մեղու» լրագրի խմբագրի
Սիմոնեանցը իմ ստորագրութեամբ մի նամակ
հրատարակեց, որի համար ևս հրատարակա-
յալով յիշեցնում եմ բոլորովին և կատարելապէս
կեղծ է, և թէ ևս պ. խմբագրից պատասխանա-
տուութիւն կը պահանջեմ օրէնքով: Ես իմ
խնդիրը պատրաստելիս այլ և այլ աղբիւրնե-
րից լսում էի, թէ պ. Սիմոնեանց ղրտուարու-
թիւն ունի այս նիւթի մասին քննութիւն բաց-
վելու ժամանակ ինձ ուրիշ բանով մէջ խնդա-
ւոր անելու: «Մեղու» 87 համարի ֆելետոնում
պ. Փիլոսոֆաղանցի հասցեով գրածը կարդա-
լով, ես համոզուեմ եմ, որ կեղծ նամակի քննու-
թիւնը լինելիս, պ. Սիմոնեանց բան հարցը
խառնելու է ուրիշ բաների հետ: Ես բնաւ չեմ
ստում, թէ «Մեղուն» իրաւունք ունի ինձ իբրեւ
օրինաց այս ինչ կամ այն ինչ յօդուածների դէմ
մեղադրողի պէս մի անձ ոտնիկանութեանը
մատնելու: Կա թող անէ երբ ուզում է և ոչ թէ
ներկայ գործի հետ խառնել: Եթէ պ. Սիմոնեանց
այդ բանը կամ քննութեան ժամանակին կամ
դատաստանում, դա այն ժամանակ կը լինի մի
ուրիշ գործ և ամենին կապ չի ունենայ կեղծ
նամակի գործի հետ:

Ա. Արիւստանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՐԵՐՑ

Կազմա դատաւի Բարանի գիւղից մեզ գրում
են, որ 9 ամիս սրանից առաջ այդ գիւղի մի
երկտասարդ գնում է Կարմիր կոշտ գիւղը
գործով, մօտ 4 ժամ հեռավորութեամբ Բարանի
գիւղից: Բայց ահա ինչ ամիս անցնում է և
երկտասարդը չը կայ: Նրա ծնողները յուսա-
հատած, դադարում են օրններէ: Եւ ահա մօտ
օրերս գտնում են մի կոնար, որի նշաններէց,
նրա մօտ ընկած դասակից, մի թասից և այլն,
ճանաչում են, թէ դա կորած երկտասարդի
կոնարն է: Ամիս չէ անցնում, աւելացնում է
թղթակիցը, որ Կազմաում չը պատահին աւա-
ղակութիւններ:

ԳՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են, որ այդ քաղա-
քում պ. Բարատուրեանց և Արդուանեանց
սկսեցին հաւաքել նուիրատուութիւններ յօդուած
Վասի Կոնստանտինի և Կ. Պօլի Միքայէլ Բն-
կերութեան: Չաւաքեմք, առհասարակ, շատ
գովարդ է մի բան հաւաքել աւելացնում է
թղթակիցը, բայց այս անգամ յոյս կայ, որ բա-
ւական փող կը հաւաքել յիշեալ բարեգործա-
կան նպատակներով:

«Донская Пчела» լրագրին գրում են Բոստո-
նից գաւառի Կոյուպի գիւղից, որ այդ տեղի
չբնակներում մօրեկը մեծ տարածութեան վրայ
ձու է գրել քաղաքի վրայ: Գիւղացիները սկսել
են կրկին վարել գետնի վրայակալար միջոցով
ձուերը սննդանկուտ նպատակով:

Մայրաքաղաքի լրագրինը հայտնում են,
որ եւրօպական Բուստանի մի քանի տեղե-
րում այժմ սիրող հայեր թանգութեան և սովի
պատճառով փորձ են փորձում խառնել ցորենի
ալիւրը կարտօֆիլի ալիւրի հետ և այդ տեսակ

խառնուրդից հաց թխել: Բայց այդ փորձն էլ
սպասելի հետեւանքներ չէ տուել և չէ էփանա-
ցրել հացը, որովհետեւ կարտօֆիլի զինը այժմ
շատ բարձր է:

Այսօր, ուրբաթ, ժամը 11½ բացվելու է Կու-
կիպում բժշկարան, որի հիմնդիրն են բժիշկ-
ներ Նաւասարդեանց, Պալլոսիկի, Բուրգովիկի,
Ուշակով և Շահ-Աղիկ:

ՄԵՂՐԻ գիւղից պ. Ս. Մ. Մարտիանցը մեզ
խնդում է յայտնել, որ տեղային քահանայները
այնքան վատ չեն, որպէս նկարագրված է եղել
«Մշակի» անցեալ համարներից մէկի լուրերի մէջ,
այլ ընդհակառակն նրանք լաւապէս խնամա-
բով են կատարում իրանց պարտաւորութիւն-
ները:

ԼՐԱԳՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„Голосъ“ ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱՅՈՒԹԻՒՆԸ

„Голосъ“ լրագրի մէջ տպված է հետեւ-
եալ թղթակցութիւնը: Պօլից: Հոկ-
տեմբերին „Россиа“ նաւը ըն-
դունեց Տրիպոլիս հասցնելու համար 8 ալ-
բանիներ և 3 յոյների, որոնք զանազան
յանցանքների համար դատաւարաբար
էին տաժանակիր աշխատանքների Ալեյ-
պօի գործարանների մէջ: Յանցաւորները

շղթայակապ էին, բայց նաւը հասնելուն
պէս նրանց արձակեցին շղթաներից:

Հետեւական խնայողութիւն անելու հա-
մար թիւրքաց կառավարութիւնը յանցա-
ւորներին առաջաց պէս չէ ուղարկում է
գիտութեան նաւերով, այլ ուղարկում է
նրանց օտար ճանապարհորդական նաւերով:
Ասում են, որ թիւրքաց գանձարանի մէջ
այնքան դրամ չը կար, որ կառավարու-
թիւնը այս յանցաւորներին Բէրրուտ ու-
ղարկէր և այդ պատճառով նրանց Տրիպոլիս
է ուղարկում: Պահապան օֆիցերի պատ-
մածի համեմատ այդ յանցաւորներից իւ-
րաքանչիւրը մի քանի տասնեակ տարիներ
ընդ դատաւարաբար է եղել տաժանակիր
աշխատանքների:

Մի գերմանուհու առաջարկութեամբ նա-
ւերի վրայ նստողները 15 թիւրքաց լիւր
հաւաքեցին յօդուած յանցաւորներին: Հետեւ-
ապահովները կարծում էին, որ արաքա-
ւածները այդ փողով իրանց պահապան-
ներին կը կաշառէին և ազատութիւն ձեռք
կը բերէին: Վերջը յայտնեցաւ, որ պահա-
պաններին կարելի էր կաշառել միայն թէ
կաշառք փոքր էր: Հոկտեմբերի 12-ին,
երբ շոգեւորեց անցում էր Եփից մի մղն
հեռավորութեամբ, յանցաւորներից մէկը
ընկաւ ծովի մէջ և օնհեացաւ: Յետոյ
յայտնեցաւ, որ նա բարձրացրած էր մի
ուրիշ նաւի վրա և այդպիսով ազատու-
թիւն էր ձեռք բերել: Միացած երեք յան-
ցաւորներն էլ մի ուրիշ նաւի վրա անցնե-
լուց յետոյ սպանել էին իրանց պահապան-
ներին և փախել:

Թիւրքայի ամեն տեղերում այժմ գո-
ղութիւններ և աւաղակութիւններ են պա-
տահու: Այս բոլորը սովի և աղքատու-
թեան հետեանց է: Կորկորում Գիւլիսիայի
մէջ աւաղակների խումբը բռնել էր մի
հարուստ յոյն օրգու, որին սարկոս էին
տարել, իսկ երկտասարդի հօր, յայտնել
էին, որ 18,000 թիւրքաց լիւրս վճարել իր
օրգուն ազատելու համար: Հայրը պատա-
հաճը յայտնեց: Մոտաւորափայտին, որի
հրամանով գիտութեանը բռնեցին աւաղակ-
ներին, իսկ երկտասարդ յոյնն ազատեցին:
Վերջ-Ասիայի ափերի մօտ գործերի մեծ
շարժումն է լինում: Զօրքերը զլիւսաբա-
պէս և Պօլիս են ուղևորվում: Իջ թէ միայն

գիտութեանը, այլ և օֆիցերները պա-
տաւորաբար շորեր օւնեն և առանց կօշիկ-
ների են: Կարգանքիս ներդրելի մէջ
թիւրքաց կառավարութիւնը շարունակում
է միմաներ դարսել: Առհասարակ ամեն տեղ
թիւրքայի մէջ պատերազմական պատ-
րաստութիւններ են տեսնվում:

Կ. Պօլիս մէջ փողոցը գուրս դալու ժա-
մանակ հարկաւոր է շորերի բոլոր կոծակ-
ները կապել, եթէ ոչ կարելի է կօշիկ
կամ ժամացոյցը, կամ պօրածնէն: Մի
խումբ աւաղակների զոդութեան այդ ձեռով
է պարագում:

Լոնդոնի „Times“ լրագրին հեռագ-
րում են Վիեննայից, որ պ. Գօլէն յայտնեց
թիւրքաց կառավարութեանը, թէ Անգ-
լիան մտադիր է առաջարկել Թիւրքայի
մէջ Ֆինանսական մի մասնագործ հիմ-
նել: Աւստրո-Սերբարիան, Զերմանիան և
Ռուսաստանը ցանկանում են, որ այդ մաս-
նագործը մշտական հսկողութեան իրա-
ւունք չունենայ, որովհետեւ այս դէպքում
սուլթանը չի ընդունի Անգլիայի առաջար-
կութիւնը: Թիւրքաց Ֆինանսների վա-
ղորդները տմեքի ուշադրութիւնը իր
վրայ է դարձնում: Եթէ կառավարութիւնը
աւելի հեռատես և խնայող լինի, մասնա-
գէտների կարծիքով, այդ գրութիւնը կա-
րելի էր բարելաւել:

ԹԻՒՐԻՍ

Երեւոյայէն հոկտ. 4 թուով հետեւեալը
կը գրեն մեզ:

„Հայագի պարիշտ երեսնամեայ անձ
մը, որ Ղուզուճանի գիւղերն առաւուր
ընել կերթար շատ անգամ, անցեալ շաբթո-
հիւրէրէն կը զարնուէր Բիւրսերէն, նոյն
իսկ Շահ-Հիւսէյինի սեփական տեղ մը: Եր-
սուի թէ Շահ-Հիւսէյինի եղբայր Թահիր
պէյն է զարնողը: Զարնուողն երեք օր վեր-
ջը մեռաւ:“

Անկէ կը գրեն թէ Չիւրլիւսեանի գիւ-
ղերէն Պաշա-Ղարկիցի և արքունի պա-
լատան գնապան հաճի Մուսթաֆա աղա-
յի եղբայրն է: Զուտուացի Ապիւրահման
աղա անուն երկու թուրք քանի մը ընկեր-
ներով Պօլսէն իրենց հայրենիքը վերադա-
ձած միջոցին, քարա-հիսարի և Արայ
մէջ տեղ քարա-Բիւթիկ կոչուած տեղը
միմանի աւաղակ Գուրգըր յարձակելով զա-
նոնք վերադարձ և քովերին գտնուած
1000 ոսկոյ աւանդ զրամները յափշտա-
կը են, բայց յայտնեց Գուրու-Չայէն Ան
կը թալիք 500 օշխարի հօտ մը: Դօնէ կո-
չուած տեղը Բուրգըրը յափշտակը են:
Սօսէ 4 ժամ հեռավորութիւն ունի Անկէ:
Երեւոյ յափշտակը Գուրգը Արայ մօտ
Չիլի լուսած տեղն ապառաւանքով Ակ-
նայ անցեալը արդիւր են:

Անշուշտ այս իրողութիւնն այլ մէրձե-
մանը Հաղիգաթի Եղեկաբ Երաւանեան
դէմ չայոց կողմանէ հնարած գրգար-
տութիւն մ'է:

Կարնայ պաշտօնական լուրերը չարիքի
լրագիրը կը ծառուցանէ թէ Հասան-Ապիւ
(Բասէն) գաւառակին մէջ ձիւթի (ղիֆա)
և գառիկի (զընըն) և ուրիշ հանքերու
գոյութիւնն իմացուելով, նահանգին հան-
քային ծարարապատ Աքիֆ Էֆէնդի անդ
զրկուել է: Եւ բերելիք տեղեկագրին և
հանքային քարտէսներուն համեմատ գտնու-
բանցները պիտի սխառի երեւոյցը
Այս աւաւր լրագրի մէջ կը փարգամը:
Արդէն ծանուցեց թէ Կարնայ և Վա-
նայ նահանգաց Բոսիսէր Եուսուֆ փաշան
և Սարգիս Էֆէնդին Վանէն Բաղէշի ճան-
նու

բով Գարեբեյը և անոր ջրապիտակներն անցան ինչ և յժմ կ'իմանա՞նք թէ Ռուսաւթիւնի մասին ստանալիք հրամանաց սպասելով ճիշտ պիտի կը մնայ, իսկ Սարգիս Էփէնտին՝ Պօլիս վերադարձած է։

Պօլսոյ կողմէն Համիդիէ անուն կայսերական զամբարանը կողոպտող աւազակները դեռ չեն բռնաւոր։ Բայց Բերայի ոստիկանական զուգընթաց զորքուստը գործուած գոհարողներէն մին երէկ Բերայ ոստիկանի մը քով տեսնելով, իւր ստակով գնած և ոստիկանութեան պաշտօնատունը տարած է կը կարծուի թէ այսպէս աւազակաց հետքը գտնուած է։

Իրական օրը Պէլլիքատի անտառին մէջ մարդու մը դիակը գտնուեցաւ։ Ոստիկանութիւնը քննութիւններ և խուզարկութիւններ ընելու վրայ է։

Ոստիկան զինուորաց զննապետ Քասիբ պէյ, որ երկուր ժամանակ Հնդկաստան ընդնալած է, յիշեալ երկրին պատմութիւնը պիտի հրատարակէ թուրք լեզուաւ։

Քաղաքապետութեան երկու պաշտօնային յաւաքի մէջ կաշառաւորութիւն ըրած լինելով, պաշտօնական եղանակով և դատաստանի պիտի ենթարկին։

Սօֆիա նստող Ռուսական զործակաւորը Պուլկարիոյ առաջին նախարար Պ. Ջանքուֆի ձեռամբ Աղբաւանդը իշխանին արկղիկ մը զրկած է, որոյ մէջ կային թանկագին բաներ։ Պէլլիքատի Պրիւսկ մայրաքաղաքն անցնալիս նուագահանդես մը տրուելով ի նպաստ Սօֆիոյ սովետոյ, հանդիսին մասնաժողովը Ս. Պատրիարքին ուղիւ շքադրամ (մէտայլ) մը նուիրել արժանաւորելով, յանձնել է զայն Պրիւսկի (Սմանեան) դեսպանին, որ Բ. Գուռը զրկելով զայն, Բ. Կրան կողմէն ալ զայն արժանաւորելով և Պօլիս հանդես թորոսեան էֆ. չորեքշաբթի օրը պաշտօնապէս խափարելով Ս. Պատրիարքին տունն երթալով, Ս. Սարգիսեան կը յանձնեն յիշեալ ոսկի շքադրամը՝ որոյ մէկ կողմը գրուած է «ի յիշատակ նուագահանդեսի ի նպաստ սովետոյ» Սօֆիոյ և միւս երկուս ալ «սուրբ Եւսեբիոս Պատրիարքն Հայոց»։

ԱՐՏԵՆԵԱՆ ԳՈՐԾԵՐ

Դատարանից «Polit. Corresp.» լրագրին գրում են հետեւեալը նոյեմբերի 19-ից։

Երթիկ-Փաշա պատրաստվել է շրջապատել և պաշարել Գուլջինիօն։ Հաստատուած են, որ նրան աջակցել է փակել Գուլջինիօնի մէջ ալբանացիները նրանց, որոնք ընդգրկանում են Գուլջինիօնի յանձնելուն։ Այս գործի նպատակն է խանգարել ալբանացիներին նորեկ բազմութիւն խուսափելու միանալ իրանց ազգակիցներին հետ։ Այս կարգադրութիւնը աշտուղութիւն ունեցաւ, որովհետեւ ալբանացիները չափազանց վրդովված են թէպէտ նրանց և թիւրք կանոնադրութիւնը մէջ կուի չէ պատահել։

Միացեալ Նաւատորմի հրամանատարները յայտնեցին ծովապետ Սէյմուրին, որ նրանք հարկաւոր դէպքում օգնութիւն կը հասցնեն չերնօգործական իշխանին, երբ նա կը սկսի զբաւել Գուլջինիօն։

Նոյն լրագրին հաղորդում են Ս. Պետերբուրգից հետեւեալը։ Եւրոպան անհամբերութեամբ սպասում է Գուլջինիօն չերնօգործական յանձնելու լուրին։ Եւրաքան չիւր շաբաթ Ե. Պօլսի մէջ նոր ժամանաւորութիւնը են որոշում, բայց գործը առաջ չէ գնում։ Այս հանգամանքը սպառնացաւ նաեւ, որ թիւրքերից ոչինչ չէ կարելի

ստանալ, մինչև նրանց վրայ զօրեղ ճնշումն չը գործեն։ Առաջ երբ Գուլջինիօն գործը դժուարացաւ, Ռուսաստանին մեղադրում էին, երբ թէ նա է դժուարութիւններ ծագեցնում։ Յետոյ լեւրը մի քանի ժամանակից այլևս չեն տարածվում։ Մի քանի շաբաթներ անցել են և իւրեքին ոչինչ չէ անում, բաւականատեղով դատարկ խոստումներով։ Գուլջինիօն գործը ոչ թէ Ռուսաստանին է դանդաղեցնում, այլ այն թիւրքասէր ճաւերը, որոնք արտասանում են եւրոպական դանազան պարլամենտների մէջ, մինչդեռ յայտնի է, որ թիւրքաց կառավարութեանը մի քաջալերական բան էլ բաւական է ընդդիմաբանութիւնը շարունակելու համար։ Իսկապէս Ռուսաստանը առիթ չունէ Գուլջինիօնի գործի ուշանալու պատճառով եւրոպական միւս պետութիւններից աւելի տրտելի։ Ընդհանրապէս Ռուսաստանը աւելի պէտք է ուրախանար գործի յետաձգելու պատճառով, եթէ նա ճշմարիտ հետեւում էր մաքրափական քաղաքականութեանը։ Ռուսաստանը այնքան համակրում է չերնօգործային և այնքան յարգում է եւրոպայի հեղինակութիւնը, որ բոլոր միջոցները գործ է գնում Գուլջինիօնի գործը վերջացնելու համար։ Եթէ մինչև անգամ գործը յետաձգվի, այնուամենայնիւ դա երկարատեւ չի լինի և արեւելեան գործերի հետ ծանօթ տնտեսական հարաւորեցումն է։

Թիւրքերից իւրաքանչիւր չը բռնկված վերքը ժամանակով աւելի էլ մնանաւոր կը մայ։ Հաստատուած է լինելով, որ Թիւրքերից քայքայումը անփախչելի է, Ռուսաստանը պէտք չունի մանր ինտրիգաների գիմել, քանի որ ինքը հարկաւոր ժամանակ իր շահերը պաշտպանելու համար բաւական ոյժ կունենայ։ Եթէ եւրոպական պետութիւնները կամենան նաեւ ապագայ անկարգութիւնների որոշուն առնել, Ռուսաստանը միշտ պատրաստ է նրանց օգնութիւն հասցնել։

Լօնդոնի «Standard» լրագրին Կ. Պօլսից գրում են հետեւեալը նոյեմբերի 17-ից։ Երբ ալբանացիները անդեկացան, որ Բ. Գուռը վճռել է յանձնել Գուլջինիօն չերնօգործականներին, նրանք Սօֆիա-Փաշայի նախագահութեամբ մի մեծ ժողով կազմեցին և հետեւեալ վճիռները կայացրին։ 1) Գուլջինիօն երբեք չի յանձնվի չերնօգործականներին։ 2) Իւրաքանչիւր ալբանացի պարտաւոր է վերադարձնել Բ. Կրանը իր ստացած աստիճանը կամ շքանշանը և նորեկը չընդունել։ 3) պէտք է պատժվեն բոլոր այն առաջնորդները, որոնք ալբանական միութեանը անհաւանդ կը գտնվեն և նրա հրամանները չեն կատարել։ Բացի այս ժողովը վճռեց խնդրել սուլթանից Ալբանիայի ինքնավարութիւնը ընդգրկել այս անցքերը չէր հաղորդում Բ. Կրանը մինչև սուլթանին և Ֆերիքի ստորագրած ստացուած Սուրահի, որ Կերվիշ-Փաշան էլ նոյն ուղղութեամբ է գործում։ Ալբանացիները երգվել են, որ մի կտոր չեն տայ Չերնօգործային, կամ թուրքական։

Լօնդոնի «Daily News» լրագրին հետագրում են, որ Կերվիշ-Փաշա մտադիր է հրաժարական տալ, որովհետեւ ալբանացիները յայտնել են, թէ նրանց ի դուր են ժողովումը որովհետեւ նրանք չեն կամենում ոչ մի խորհուրդ ստանալ Կերվիշ-Փաշանից։

Կերվիշ-Փաշան լրագրիներից մէկին հետագրում են, որ ամեն ինչ սպասվում է Գուլջինիօն յանձնելու չերնօգործականներին։ Որովհետեւ քաղաքը լաւ պաշարված էր, նրա մէջ պահուստեցան կենսական պիտոյքները։ Ալբանացիները հարկւրներով թողնում են

քաղաքը և հեռանում են իրանց բնակարանները, մինչդեռ քաղաքի մէջ մնանք ամենքին արգելված է։

Սուլթանը «Diritto» լրագիրը նոյեմբերի 17-ին մի յօդուած էր տպել, որի մէջ ստացւած է, թէ սուլթանից ուղարկած հետազոտողները Գալատալի մէջ զննարկում և Կրան նախկին խոստումները Ս. Սուլթանին Անգլիան դեռ էլի մի քանի օր կը սպասէ և եթէ Թիւրքերն չի կատարել իր խոստումները, այն ժամանակ Գալատալի կառավարիչը եւրոպական պետութիւններին որ և է միջոց գտնել ներկայ գծուարութիւնների առաջն առնելու համար։

Տեղից լրագրիներին հաղորդում են, որ միացեալ Նաւատորմի վրա եղած ծառայողներին դրուելու վրա է։ Առաջ նրանք անհամբերութեամբ սպասում էին, որ կը սկսվի, բայց շուտով նկատեցին, որ հարցը օրից օր յետաձգվում է։ Ս. Ս. լուր է տարածված, որ նաւատորմը դէռ էլի երկու ամիս կը մնայ իր տեղ անգործ և ամենքը անտարբեր և ձանձրացած են։ Ս. Ս. անգործութիւնն է պատճառ, որ անգաղաքային և այն պետութեան նաւերի վրա ծառայողները միմեանց հետ անբարեկամութիւններ են ունենում։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՅ

Վան, հոկ. 16/28 1880

Հարստաւարութեան և բռնութեան հետեւեալը միշտ յեղափոխութիւն է. սա պատմական ճշմարտութիւն է, որոյ ոչ ոք կրնայ հակառակել։ Անցեալ աղէտալի պատերազմի առթիւ երբ եւրոպական ազգաց և տէրութեանց ուշադրութիւնը գրաւեց ընդհանուր կերպով Հայաստանի հարստաւարեալ և բաղաձայն ժողովուրդը տրտուր և անտանելի վիճակը, շատ մը օտար լրագիրք միան հակապատմական պատմութեան մը խիստ մտաւորաւ նկատելով, բարեկրթականաց անցաւոր գործարարութիւնը պահանջել և մինչև անգամ պ. Հէնրի Լէյքը քանիցս պաշտօնապէս թուրք կառավարութեան ազգապարկ թէ Հայաստանում գործարարութիւնը բարեկրթականութիւնը եթէ ալ ևս յապաղին, Պուլկարական խնդրոյն համաձայն հայկական խնդրի մը յառաջ պիտի գայ. նորա մարդարեալական գուշակութիւնը այսօր ամեն մարդ կարող է արդէն կատարուած համարել։ Հայկական խնդիրը այսօր բոլորովին պաշտօնական հանգամանք մը առած է և Հայաստանում տիրող անխիղճութիւնը և հարստահարութեան շարունակուելը հայկական ազատաբնութեան գոյութիւնը սուս է։ Վասպուրական, Մուշ, Բաղէշ, Կարին. արդէն ունեն յեղափոխական մասնաժողովներ, որոնք գաղափար միջոցներով աշխատում են գործակից լինել Հայկական ընդհանուր ազատաբնութեան ի Հայաստան։ Թէ գործերն ինչ կարգի մէջ են Հայաստանի միւս գաւառներում ու որ դեռ այս րօպէս մեր կողմեր, քանզի թղթապարտական և հեռադրական յարաբերութիւնը ժամանակ մի վեր խիստ անկանոն կերպով կառավարւում են և կառավարութիւնը հայը վերաբերեալ լրագիր, նախկին կամ հեռագիր ձեւերակաւում է։ Գալով Վասպուրականում վերջերս տեղի ունեցած շարժմանը, թէ քաղաքը արկեցած է և պատրաստվում է իր ժողովուրդը արկեցած է և պատրաստվում է իր ժողովուրդը զինու գործութեամբ հարկել երկրում պաշտպանելու ի հարկէ խոհեմութիւնը չը ներել այն մեծ ցոյցեր ընել կառավարութեան դէմ նորա ուշադրութիւնը չը գրաւելու համար. արդէն կառավարութիւնը չէլիս իրաւունքային արտաստիւթիւնը պատրուակ բռնելով, բազմաթիւ զօրաց խումբեր բերում է Վասպուրական, որոնք ճշմու, հարստահարում և նեղում են խեղճ գիւղացի հայերին։

Տեղական թուրք վարդապետները քանզի քաղաքները, բռնութիւնը և անխիղճութիւնը մղում և ստիպում են ժողովուրդը գնել վեր առնելու և թշնամաց հետ անձամբ անձին մարտնչելու, ինչպէս

պէս որ մի քանի օր առաջ Կարինում, որ 16 հազար հայեր կան, պատահած դէպք մը զայս կապացուցանէ։ Այդ գաւառացի միւստիք հարստահարիչ և կեղերիչ բարբարոս անձ մը ըլլալով, ժողովուրդը բազմաթիւ գծով էր նորանից և սպասում էր մի պատէճ առթի նմա ցոյց տալու իր գծովութիւնը գործնականապէս։ Այսպէս անցեալ երկուշաբթի օր ժողովուրդէն կարծի երկատարները յարձակում ըրին թիւրքերի վրա և ծեծեցին զայն ու իր ժանդարմները, որոնցից մէկ քանիս վիրաւոր ընկան։ Այս ընելէ ետքը նորա քաղաք քաղցով բողբոջեցին Անգլիոյ հիւպատոս կապիտան Կէյթին, ցոյց տալով նրա որ միւստիք գնելով գեղերում պէտք էր մի բարեկարգութիւն լինել տաճկաց խեղճով, բայց այժմ յետին քան զառաջին վատ եղաւ։ Նոյնպէս Նորբաղի Գոթան գիւղի հայեր անցեալներում մի կուի ունեցան 140 զինեալ քուրդ աւազակներու հետ, որոնք եկած էին գիւղը աւարի առնելու։ Հայեր իրենց Մէլիքի և վարդապետի առաջնորդութեամբ յարձակում ըրին բուրդեւուն վրայ, 4-5 ժամ պատերազմելով յաջողեցան վանել աւազակները, որոնք 30-ի չափ մօտ մեռեալ և վիրաւորեալ թողալով իրենցից փախան։ Հայոցմէ մէկ սպանուած կար և մի քանի վիրաւորեալ, որոնք, լրագիր նայելով, յետոյ մեռան։ Գարնեալ նոյն գիւղի բնակիչը կուսեցան այս օրերս քուրդերու հետ, որոնք եկած էին նրանց արտերը բռնութեամբ հնձելու, ինչպէս որ նորա միշտ ամբար են ընել գիւղի քահանայ ամիր-ճապէս ժողովուրդի գլուխը անցած զինաւորեց բուրդերին և հայք սկսան կրակ ընել նոյս վրայ, որոնք պարտաւորեցան ամենայն ինչ թողալով փախչել։ Վերջին լուր. Պաշայի հայոց առաջնորդը, գերապատիւ Յովհաննէս վարդապետ Գալուսի, խումբ մը հայերու գլուխն անցած ս. Բարթողիմէոս վանքի մօտեւն աւազակաց խումբի մը հետ պատերազմեցաւ։ Գուրդերից միւր սպանեցաւ և երկուք ալ ծանր վերքեր ստին քաջամարտիկ հայ հոգեւորականի ձեռամբ։ Այս դէպքեր թէեւ մեծ բաներ չեն, բայց սպառնոյց մ'են թէ Վասպուրականում հայք շարժվում են, ինքզինքնին պաշտպանելու ձեռնարկում են և Աստուծով նորա հետհետէ աւելի մեծ գործեր պիտի տեսնեն, երբ ժամանալը դայ։ Այժմ բոլոր հայ ժողովուրդը յաղէկալ է. ամեն մարդ լաւ հասկացած է որ Հայկական խնդիրը պիտի չը կարգադրուի առանց հայաստանցի հայուն գործնական մասնակցութեանը, վասնորոյ խումբեր կազմվում են և ամեն մարդ արթնատու է ի մօտոյ տեղի ունենալի պատմական մեծամեծ և քաղաքական եղելութիւններում իր մասն և բաժինը ունենալու, միայն քանի մը կը պակսի, այն է դրամ, որով հնար է միայն հարկ եղած պատրաստութիւնները այժմ ընել։

ՄՇԱԿԻ ՀԵՌՈԼԴԻՆԵՐ

ՄԻՋԱԶԳՅԱՆ ԲԵԿԵՐՈՒԹԵՆԵՐ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 նոյեմբերի։ «Голос» լրագիրը հաղորդում է, որ սկզբունքով վճռված է եկամտի վրա հարկ դնել։ «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ վճռված է աւելացնել նահանգապետներին տնտեսները։ «Herald» լրագիրը հաղորդում է, ինչի մէջ գաղափար տպաբան է գտնված։ Կառնաւորված են մի տղամարդ և մի կին և ուղարկված են Ս. Պետերբուրգ։ Կարծում են, որ երկուսն էլ նշանաւոր պետական յանցաւորներ են։ Ստար Բաւանուլութիւնների բաժինը աշխատում է, որ մահմեականների պատկերից ստացված տուրքերը շտապանաւ։

Կ. ՊՈԼԻՍ, 19 նոյեմբերի։ Չերնօգործական իշխանը ներքե Պօղգորցիւում կաշառաւորված մահմեականներին։ Սուլթանը հրաժարից միւսոր մասնաժողով նշանակել Վերի-Մահմեդի մտաւոր ընդունակութիւնները ընկելու համար։ Մասնաժողովի անհրաժեշտ երկուք ինչի մէջ չորսնի փաշաներն են։ Այսօր մասնաժողովի առաջին նիստն է լինելու։

Խմբակիր-հրատարակող ԳԵՐԳՈՐ ԱՐԴՐՈՒՆԻ

